

Ուսանողի Եթիկայի կանոնակարգ

Ուժի մեջ է՝ 07.07.2023 թ.-ից

Ընդունող մարմին՝

Ուսումնական հարցերով փոխնախագահ

Հայաստանի ամերիկյան համալսարան

Հրապարակման քաղաքականություն

Քաղաքականության համար՝ ACAD20150014

1. Նախաբան

ՀԱՀ-ի ուսանողները, դասախոսները և վարչական անձնակազմը՝ ինչպես համատեղ, այնպես էլ անհատապես, պատասխանատու են այս հաստատությունում ակադեմիական բարեվարքության պահպանման համար: Սույն Եթիկայի կանոնակարգը կարգավորում է Համալսարանի յուրաքանչյուր ուսանողի ակադեմիական վարքագիծը և պետք է կիրառվի ուսանողի ակադեմիական վարքագծին առնչվող բոլոր հարցերը կարգավորելու և դրանց վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով՝ այնքանով, որքանով դա գործնականում հնարավոր է:

ՀԱՀ-ի ուսանողները պարտավոր են իրենց դրսևորել Համալսարանի՝ որպես բարձրագույն ուսումնական հաստատության, առաքելությանը համապատասխան: Ուսանողները պարտավոր են զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք, ինչպես իրենք տեղյակ են կամ պետք է տեղյակ լինեն, կարող են վնասել Համալսարանի ակադեմիական բարեվարքությանը: Գործողությունները, որոնք ՀԱՀ-ից դուրս կարող են համարվել ընդունելի կամ նորմատիվ, կարող են ընդունելի չհամարվել ՀԱՀ-ում և չպետք է խոչընդոտեն ընդհանուր ակադեմիական վարքագծին: Բոլորը պետք է արժանան հավասար վերաբերմունքի և առաջնորդվեն գործող կանոնակարգով: Սույն Եթիկայի կանոնակարգը կարող է ժամանակ առ ժամանակ վերանայվել և փոփոխվել:

2. Ակադեմիական ծրագրի դրույթներ

Եթե սույն փաստաթղթի որևէ դրույթ ուղղակիորեն հակասում է ակադեմիական ծրագրի Եթիկայի որևէ դրույթին, ապա գերակայում է սույն փաստաթղթում նշված համապատասխան դրույթը: Եթե սույն փաստաթղթում ուսանողի Եթիկային առնչվող որևէ հարց բացակայում է, ապա տվյալ հարցի կարգավորման համար գերակայում է ուսանողի ակադեմիական ծրագրի համապատասխան դրույթը:

3. Իրավունքներ

Որպես Հայաստանի ամերիկյան համալսարանի համայնքի անդամներ՝ ուսանողներն ունեն հետևյալ իրավունքները.

3.1. Կրթության հավասար հնարավորություններ

Յուրաքանչյուր ուսանող իրավունք ունի զերծ լինելու խտրականությունից՝ հիմնված ռասայի, կրոնի, էթնիկական ծագման, քաղաքական պատկանելության, տարիքի, սեռի, հաշմանդամության կամ սեռական կողմնորոշման վրա:

3.2. Ակադեմիական ազատություն

Ուսանողներն ունեն խոսքի ազատության իրավունք, ինչպես սահմանված է Համալսարանի ակադեմիական ազատության մասին հայտարարությունում, ինչպես նաև հավաքների և միավորումների ազատության իրավունք, քանի դեռ այդ ազատությունների կիրառումը չի խոչընդոտում դասընթացների արդյունավետ իրականացմանը, համապատասխանում է Համալսարանի քաղաքականություններին, Կրթական պայմանագրին, ՀՀ օրենքներին և պահպանում է այլոց իրավունքների նկատմամբ հարգանքը:

3.3. Ուսումնական գործընթաց

3.3.1. Թեև ուսանողները պարտավոր են տիրապետել դասախոսների կողմից ներկայացված նյութին, նրանք իրավունք ունեն կառուցողական ձևով արտահայտելու իրենց անձնական կարծիքը:

3.3.2. Թեև կրթական հարցերում որոշումներ կայացնելու լիազորությունը պատկանում է դասախոսներին և վարչական անձնակազմին, ուսանողները կարող են կառուցողական ձևով առաջարկություններ անել կրթական գործընթացի վերանայման և բարելավման վերաբերյալ:

3.3.3. Ուսանողներն ունեն գնահատման չափանիշների մասին տեղեկացված լինելու և դասախոսի կողմից արդար կերպով գնահատվելու իրավունք: Նրանք նաև իրավունք ունեն բողոքարկելու գնահատականը՝ մաթեմատիկական սխալի կամ գնահատման չափանիշների ոչ պատշաճ կիրառման հիմքով: (Տե՛ս «Գնահատման քաղաքականություններ» բաժինը):

3.4. Գաղտնիություն

Ուսանողներն իրավունք ունեն պաշտպանված լինելու իրենց ֆինանսական, բժշկական և կրթական գրառումներում պարունակվող տեղեկատվության չարտոնված բացահայտումից:

3.5. Ուսանողական կազմակերպություններ

3.5.1. Ուսանողներն ազատ են ստեղծելու ուսանողական կազմակերպություններ և անդամակցելու դրանց Ուսանողական խորհրդի շրջանակում՝ իրենց ընդհանուր շահերը ներկայացնելու նպատակով: Ուսանողական կազմակերպությունները կարող են ուսումնասիրել և քննարկել հետաքրքրություններ կայացնող բոլոր հարցերը՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

3.5.2. ճանաչված ուսանողական կազմակերպություններին կարող է տրամադրվել Համալսարանի շենքերից, ենթակառուցվածքներից և ծառայություններից օգտվելու արտոնություն՝ Համալսարանի վարչական քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան:

3.6. Ունեցվածությունից զերծ մնալու իրավունք

Ուսանողներն իրավունք ունեն զերծ մնալու համալսարանական համայնքի ցանկացած անդամի կողմից կատարվող ցանկացած տեսակի ունեցվածությունից:

3.7. Պատշաճ ընթացակարգ

Ուսանողներն իրավունք ունեն օգտվելու պատշաճ ընթացակարգից՝ իրենց դեմ Համալսարանում հարուցված ցանկացած վարույթի շրջանակում: Սա ներառում է լսված լինելու իրավունքը, անաչառ անձանց կամ մարմինների կողմից վերանայման և որոշումների կայացման իրավունքը, ինչպես նաև պատշաճ ծանուցման իրավունքը:

3.8. Ժամանակին ծանուցում

Ուսանողներն իրավունք ունեն ժամանակին ծանուցվելու կարգապահական վարույթի կամ միջոցի մասին՝ խախտման հայտնաբերումից հետո հնարավորինս կարճ ժամկետում:

3.9. Բողոքարկման գործընթաց

Ուսանողներն իրավունք ունեն ուսանողի որևէ իրավունքի խախտման դեպքում բողոք ներկայացնելու Էթիկայի և բողոքարկման հանձնաժողովին՝ դրա սահմանված ընթացակարգերի համաձայն:

4. Պարտականություններ և կարգապահական միջոցներ

4.1. Յուրաքանչյուր ուսանողի պարտականությունն է ծանոթանալ սույն Կանոնակարգի և ՀԱՀ-ի բոլոր քաղաքականությունների դրույթներին: ՀԱՀ ընդունվելիս յուրաքանչյուր ուսանողի տրամադրվում է

Կանոնակարգի օրինակը: Կրթական պայմանագրի ստորագրումը համարվում է պատշաճ ծանուցում և համաձայնությունն առ այն, որ ուսանողը կարդացել, հասկացել է Կանոնակարգը և համաձայնում է հետևել դրան:

4.2. Յուրաքանչյուր ուսանող պետք է գերծ մնա ակադեմիական անազնվության դրսևորումից կամ ցանկացած այլ գործողությունից, որը կարող է խաթարել Համալսարանի ակադեմիական բարեվարքությունը:

4.3. Սույն Կանոնակարգի խախտման հայտնաբերման դեպքում կարող են կիրառվել հետևյալ կարգապահական միջոցները.

4.3.1. բանավոր նախազգուշացում ուսանողին,

4.3.2. գրավոր նախազգուշացում ուսանողին,

4.3.3. տվյալ ակադեմիական գնահատման կամ դրա բաղադրիչներից մեկի միավորի իջեցում,

4.3.4. տվյալ ակադեմիական գնահատման կամ դրա բաղադրիչներից մեկի վերահանձնում,

4.3.5. դասընթացի ձախողում,

4.3.6. կասեցում,

4.3.7. հեռացում:

4.3. Այն պատժամիջոցները, որոնք նախատեսված են 1-ից մինչև 4.3.5 կետերով, կարող են կիրառվել դասախոսի կողմից, մինչդեռ 4.3.6 և 4.3.7 կետերով նախատեսված պատժամիջոցները կիրառում է Ուսումնական հարցերով փոխնախագահը:

4.4. Դասախոսները, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցում են Ծրագրի ղեկավարի և/կամ Դեկանի հետ՝ նման խախտումները պատշաճ կերպով կարգավորելու նպատակով:

4.5. Հատկապես լուրջ դեպքերում դասախոսը կարող է առաջարկել Ծրագրի ղեկավարին դիմել Ուսումնական հարցերով փոխնախագահին՝ ուսանողին կասեցնելու կամ հեռացնելու հարցով: Սույն կանոնակարգի խախտման համար ուսանողի կասեցման կամ հեռացման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է Ուսումնական հարցերով փոխնախագահը:

4.6. Եթե կիրառվում են 4.3.4 կամ 4.3.5 կետերով նախատեսված պատժամիջոցները, ապա դասախոսը լրացնում է Ուսանողի Էթիկայի կանոնակարգի խախտման մասին ձևաթուղթը և ներկայացնում այն Ուսանողական և ուսումնական հարցերի գրասենյակ՝ ուսանողի անձնական գործում ներառելու համար: Ուսանողական և ուսումնական հարցերի գրասենյակը պարտավորվում է այդ մասին տեղեկացնել Ուսումնական հարցերով փոխնախագահին, որը կարող է կիրառել լրացուցիչ պատժամիջոցներ:

4.7. Ուսանողները սույն Կանոնակարգով նախատեսված կարգապահական միջոցների վերաբերյալ մտահոգություն ունենալու դեպքում նախ պետք է դիմեն համապատասխան դասախոսին: Եթե ուսանողը կարծում է, որ կարգապահական միջոցը կիրառվել է սխալմամբ, նա կարող է հարցը քննարկել Ծրագրի ղեկավարի հետ: Եթե Ծրագրի ղեկավարը տվյալ դասախոսն է, ուսանողը կարող է հարցը քննարկել Ֆակուլտետի դեկանի հետ:

5. Բողոքարկում

Ծրագրի ղեկավարի հետ քննարկումից հետո, եթե ուսանողը կարծում է, որ ակադեմիական բարեվարքության կամ ակադեմիական վարքագծի խախտման համար կիրառվող կարգապահական միջոցն անարդար է, նա կարող է բողոքարկել Էթիկայի և բողոքարկման հանձնաժողովին (ԷԲՀ)՝ համաձայն հանձնաժողովի Բողոքարկման ընթացակարգի կանոնակարգի: Ընդհանրապես, ԷԲՀ-ն կարող

Է փոփոխել կարգապահական միջոցը միայն այն դեպքում, եթե այն եղել է սխալ կամ խիստ անարդար:

6. Սահմանումներ

Սույն Կանոնակարգում կիրառվում են հետևյալ սահմանումները՝

6.1. Ակադեմիական բարեվարքություն

Ակադեմիական էթիկական սկզբունքների և ազնվության պահպանում:

6.2. Ակադեմիական գնահատումը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- լսարանային քննություններ՝ գրավոր կամ ոչ գրավոր,
- լաբորատոր հաշվետվություններ,
- տնային պայմաններում անցկացվող քննություններ,
- հետազոտական կամ կուրսային աշխատանքներ,
- առաջադրանքներ, դեպքերի ուսումնասիրություններ և վարժություններ,
- ցանկացած այլ ակադեմիական աշխատանք, որը նախատեսված է տվյալ դասընթացի շրջանակում ուսանողի առաջադիմությունը գնահատելու համար:

6.3. Համապատասխան դասախոս

Համապատասխան դասախոսը այն դասախոսն է, որի դասընթացի շրջանակում կամ որի ղեկավարության ներքո առաջացել է վեճը:

6.4. Ակադեմիական անազնվություն

Ցանկացած գործողություն կամ գործողության փորձ, որը կարող է հանգեցնել անարդար ակադեմիական առավելության ստեղծմանը սեփական անձի համար կամ անարդար ակադեմիական առավելության կամ անբարենպաստ պայմանների ստեղծմանը ակադեմիական համայնքի որևէ այլ անդամի կամ անդամների համար, ներառյալ մեկ ուրիշի աշխատանքը որպես սեփական ներկայացնելու դեպքերը: Օրինակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

6.4.1. Ակադեմիական ոչ պատշաճ վարքագիծ: Ակադեմիական ոչ պատշաճ վարքագիծ է համարվում ցանկացած դիտավորյալ գործողություն, որը խաթարում է Համալսարանի ակադեմիական էթիկան՝ սույն Կանոնակարգի վերոնշյալ սահմանումներից դուրս: Ակադեմիական ոչ պատշաճ վարքագիծը ներառում է, *քայքայ չի սահմանափակվում հետևյալով.*

6.4.1.1. գրադարանում պահվող և կոնկրետ դասընթացների համար նախատեսված նյութերը հեռացնելը, վնասելը կամ դիտավորյալ կերպով դրանք մյուս ուսանողներից թաքցնելը,

6.4.1.2. ակադեմիական առաջադրանքի համատեքստում էականորեն խեղաթյուրված տեղեկատվության տրամադրումը,

6.4.1.3. տեղեկատվություն կամ տվյալներ կեղծելը կամ փոփոխելը և դրանք որպես արժանահավատ ներկայացնելը,

6.4.1.4. ակադեմիական պարտավորության համատեքստում անձը ազնվորեն չհաստատելը,

6.4.1.5. դասախոսին կամ Համալսարանի որևէ այլ պաշտոնատար անձին կեղծ կամ մոլորեցնող տեղեկատվություն տրամադրելը,

6.4.1.6. մեկ այլ անձի առաջադրանքի, գրքի, աշխատանքային նյութերի, նշումների, փորձի, նախագծի, էլեկտրոնային սարքավորումների կամ ծրագրային ապահովման դիտավորյալ վնասումը կամ գողությունը,

6.4.1.7. մեկ այլ անձի կամ Համալսարանի սեփականությանը, առաջադրանքներին կամ քննություններին անօրինական կերպով մուտք գործելը կամ դրանցում էլեկտրոնային միջամտություն կատարելը՝ համակարգչով կամ այլ միջոցներով,

6.4.1.8. քննության կամ առաջադրանքի օրինակի ստացումը՝ մինչև դասախոսի կողմից դրա պաշտոնապես հրապարակվելը,

6.4.1.9. դասախոսի կողմից տրամադրված դասախոսության նշումների, ուսուցողական նյութերի, ընթերցանության նյութերի, ձայնագրությունների կամ այլ տեղեկատվության վաճառքը, տարածումը, կայքում տեղադրումը կամ հրապարակումը, ինչպես նաև դրանց օգտագործումը որևէ առևտրային նպատակով՝ առանց դասախոսի հստակ թույլտվության,

6.4.1.10. դասախոսի ստորագրության կեղծումը երաշխավորագրի կամ որևէ այլ փաստաթղթի վրա,

6.4.1.11. փոփոխված գնահատականներով ակադեմիական տեղեկագրի ներկայացումը այլ ուսումնական հաստատություն/ից,

6.4.1.12. մեկ այլ անձի քննության կամ առաջադրանքի վրա սեփական անունը նշելը,

6.4.1.13. նախապես գնահատված քննության կամ առաջադրանքի փոփոխումը՝ գնահատականի բողոքարկման կամ վերագնահատման գործընթացում միավորներ հավաքելու նպատակով:

6.4.2. Խաբեություն: Խաբեությունը ներառում է, *բայց չի սահմանափակվում հետևյալով.*

6.4.2.1. գրառումների, գրքերի, սարքերի կամ տեղեկատվության այլ աղբյուրների, այդ թվում՝ արհեստական բանականության (AI) առաջատար գործիքների, ինչպես օրինակ ChatGPT-ի օգտագործումը կամ դրանց հղում անելն ակադեմիական գնահատման կամ առաջադրանքի կատարման ընթացքում, երբ այդ օգտագործումը հստակ կերպով թույլատրված չէ տվյալ քննությունն անցկացնող դասախոսի կողմից,

6.4.2.2. ակադեմիական գնահատման վրա մեկ այլ ուսանողի պատասխանների կրկնօրինակումը,

6.4.2.3. ակադեմիական գնահատման ընթացքում չթույլատրված խորհրդակցություն իրականացնելը,

6.4.2.4. ակադեմիական գնահատման ընթացքում սեփական պատասխանները մեկ այլ ուսանողին տրամադրելը,

6.4.2.5. ակադեմիական գնահատման ընթացքում մեկ ուրիշի փոխարեն հանդես գալը կամ մեկ ուրիշի՝ իր փոխարեն ներկայանալը,

6.4.2.6. հաշվիչի, բջջային հեռախոսի կամ այլ սարքի նախապես ծրագրավորումը՝ քննական պատասխաններ կամ այլ չթույլատրված տեղեկատվություն պարունակելու համար,

6.4.2.7. քննության ընթացքում չթույլատրված նյութերի, պատրաստված պատասխանների, գրավոր նշումների կամ թաքցրած տեղեկատվության օգտագործումը,

6.4.2.8. առաջադրանքը կամ դրա մի մասը (օրինակ՝ խմբային առաջադրանքներ) իր փոխարեն այլ անձանց կողմից կատարումը թույլատրելի, այդ թվում՝ վճարովի կուրսային աշխատանքների ծառայությունից օգտվելը,

6.4.2.9. Նույն առաջադրանքի ներկայացումը մեկից ավելի դասընթացների համար՝ առանց բոլոր ներգրավված դասախոսների նախնական համաձայնության,

6.4.3. Գրագողություն: Գրագողությունը մեկ այլ անձի բառերի, գաղափարների, հասկացությունների կամ տվյալների օգտագործումն է՝ առանց հեղինակի պատշաճ նշման: Այն կարող է դիտվել նաև այն դեպքերում, երբ ուսանողը ստեղծում է տպավորություն, թե ինքն է հանդիսանում տեղեկատվության սկզբնաղբյուրը: Գրագողությունը ներառում է մեկ ուրիշի բառերի, մտքերի կամ հասկացությունների ինչպես ուղղակի օգտագործումը, այնպես էլ վերաձևակերպումը՝ առանց համապատասխան հղման: Այն ներառում է, *բայց չի սահմանափակվում հետևյալով.*

6.4.3.1. այլ անձանց պատկանող էլեկտրոնային կամ թղթային աշխատանքներից հատվածների պատճենումը սեփական տնային աշխատանքում, էսսեում, կուրսային աշխատանքում կամ թեզում՝ առանց աղբյուրը նշելու,

6.4.3.2. մեկ ուրիշի տեսակետների, կարծիքների կամ գաղափարների օգտագործումը՝ առանց աղբյուրը նշելու,

6.4.3.3. մեկ ուրիշին բնորոշ կամ հեղինակային ձևակերպումների, փոխաբերությունների կամ այլ գեղարվեստական հնարքների վերաշարադրումը՝ առանց դրա հեղինակի նշման:

6.4.4. Ակադեմիական համայնքի անդամ: Ակադեմիական համայնքի անդամ է համարվում յուրաքանչյուր անձ, որը կապված է ՀԱՀ-ի ակադեմիական գործունեության հետ, ներգրավված է այդ գործընթացներում կամ պատասխանատու է դրանց իրականացման համար:

Առնչվող փաստաթղթեր՝

Էթիկայի և բողոքարկման հանձնաժողովի բողոքարկման ընթացակարգի կանոնակարգ

Ուսանողի վարքագծի կանոնակարգ